Վեբ– ծառայություններ մտային քարտեզներ ստեղծելու համար

Մտային քարտեզը դա մտքերը վիզուալ պատկերելու տեխնիկա է:

Հիմնականում բոլոր մտային քարտեզները կառուցվում են նույն սխեմայով՝ կենտրոնում տեղադրվում է հիմնական գաղափարը(վերնագիրը) իսկ նրա շուրջը ճյուղավորումներով տեղադրվում են այլ բանալի բառեր, հատկություններ, սահմանումներ, պատկերներ, հղումներ և այլն: Այնուհետև յուրաքանչյուր ճյուղ(բլոկ) իր հերթին կարելի բաժանել մի քանի ճյուղերի: Սխեմաները նման են ճյուղավորված ծառի, որը շատ հարմար է և տեսանելի: Նպատակահարմար է գործիքն օգտագործել նաև դասի պլանը սխեմատիկորեն ներկայացնելու համար, որին կից կարող եք տեղադրել դասին անհրաժեշտ էլեկտրոնային ռեսուրսներ, տարբեր հղումներ:

Մտային քարտեզների օգտագործումը ուսումնական գործընթացում ոչ միայն ցանկալի է, այլ նաև շատ կարևոր , նրա միջոցով կարելի է ուսուցանվող նյութը մատուցել էլ ավելի պատկերավոր և հետաքրքիր, ինչպես նաև շատ հարմար է խմբային աշխատանքների ժամանակ, որտեղ խմբի յուրաքանչյուր անդամ ունի աշխատելու և իր մտքերն արտահայտելու հնարավորություն:

Դիտարկենք նմանատիպ վեբ – ծառայությունների մի քանի օրինակներ

Xmind https://xmind.app/



Xmind – վեբ–ծառայություն է մտագրոհներ կազմակերպելու և մտային քարտեզներ ստեղծելու համար: Սա ծրագրային ապահովում է, որը պետք է տեղադրել համակարգչում կամ օրինակ սմարթֆոնի վրա:

Անվճար տարբերակի հնարավորությունները՝

- Շաբլոնների մեծ ընտրություն
- Մարկերներ և ստիկերներ
- Հղումներ ավելացնել
- Նկարներ ավելացնել
- Մտային քարտեզը արտածել որպես նկար
- Ֆայլի ամրացում

Bubbl. Us https://bubbl.us/



Bubbl. us – օնլայն ծառայություն է մտային քարտեզներ ստեղծելու և մտագրոհներ կազմակերպելու համար: Քարտեզ կարելի ստեղծել նաև անգամ առանց հաշիվ ստեղծելու,(հարմար է արագ, տվյալ պահին աշխատելու և լսարանին մտքերը սխեմատիկորն ներկայացնելու համար), բայց եթե ցանկություն կա արդեն ստեղծված քարտեզը պահպանել և հետո նորից վրան խմբագրական աշխատանքներ կատարել, ապա պետք է անպայման ստեղծել հաշիվ;

Անվճար տարբերակի հնարավորությունները՝

- Մինչև 3 մտային քարտեզ ստեղծելու հնարավորություն
- Պատրաստի քարտեզը պահել որպես նկար
- Հաշվի ստեղծում Google կամ Facebook-ի միջոցով
- Քարտեզին հասանելիություն տալու հնարավորություն

MindMeister https://www.mindmeister.com/



MindMeister –ը ունի բավականին լայն ֆունկցիոնալ և շատ պարզ միջերես: Հնարավոր է միաժամանակ աշխատել մի քանի հոգով:

Անվճար տարբերակի հնարավորությունները՝

- Մինչև 3 մտային քարտեզ ստեղծելու հնարավորություն
- Շաբլոնների մեծ ընտրություն
- Մարկերներ և ստիկերներ
- Հղումներ ավելացնել
- Նկարներ ավելացնել
- Մտային քարտեզը արտածել որպես նկար
- Համատեղ խմբագրման հնարավորություն

Popplet https://www.popplet.com/



Popplet –ը հաճախ օգտագործվում է բարձր դասարանների աշակերտների հետ աշխատելու ժամանակ: Այն շատ հարմար է կիրառել խմբային(զույգերով կամ խմբերով) աշխատանքների դեպքում՝ հանձնարարելով աշակերտներին ստեղծել մտային քարտեզ: Քարտեզը ստեղծվում է շատ հեշտ և ունի համատեղ խմբագրելու հնարավորություն: Միակ թերությունը այն է, որ աշխատանքի պրոցեսում կարող է ծրագրից դուրս քցել: Սակայն դա լինում է ոչ շատ հաճախ: Կարևորը, որ աշխատանքը պահպանվում է և պետք է միայն նորից մուտք գործել ձեր հաշիվ:

Անվճար տարբերակի հնարավորությունները՝

- Մինչև 10 մտային քարտեզ ստեղծելու հնարավորություն
- Նկարներ ավելացնել
- Մտային քարտեզը արտածել որպես նկար
- Մտային քարտեզի և հետին ֆոնի գույնի խմբագրում
- Ավելացնել ձեռքով նկարված օբյեկտներ
- Համատեղ խմբագրման հնարավորություն

Mindomo https://www.mindomo.com/



Mindomo – ն հնարավորություն ունի ստեղծված մտային քարտեզը վերածել տեսասահիկի և նրա յուրաքնաչյուր հատվածը ներկայացնել որպես առանձին սլայդ և ապա ցուցադրել:

Անվճար տարբերակի հնարավորությունները՝

- Մինչև 3 մտային քարտեզ ստեղծելու հնարավորություն
- Շաբլոնների մեծ ընտրություն
- Ֆոնի գույնի խմբագրում
- Նկարներ ավելացնել
- Հղումներ ավելացնել
- Համատեղ խմբագրման հնարավորություն